

## Մարտկոցի Սահմանափակ Երաշխիք

Research In Motion ՍՊԸ-ն (RIM), արտադրող և իր դուստր և ձեռնարկության միջոցով, Research In Motion ՍԹ ՍՊԸ, Ընկերություն No. 4022422, որի իրավաբանական հասցեն է՝ Centrum House, 36 Station Road, Egham, Surrey, UK, TW20 9LF, արտաքին մարտկոցի (Մարտկոց) մատակարարը՝ մատակարարված վերջնական օգտվողին (Ձեզ) և նախատեսված Ձեր սպեցիֆիկ BlackBerry-ի Ձեռքի սարքի մոդելի հետ համատեղ օգտագործման համար, երաշխավորում է Ձեզ, որ Մարտկոցը գերծ կլինի պատրաստման և նյութերի անսարքություններից (ա) Ձեր կողմից, որպես իրական վերջնական օգտվող, Մարտկոցը գնելու ամսաթվից մեկ (1) տարուց քիչ ժամանակահատվածում և (բ) ժամանակահատվածում, որն ավարտվում է Ձեր կողմից (i) այս Սահմանափակ Երաշխիքի, (ii) BlackBerry-ի Ձեռքի սարքի հետ տրամադրվող որևէ Սահմանափակ Երաշխիքի, (iii) BlackBerry-ի որևէ պիտույքների հետ տրամադրվող որևէ Սահմանափակ Երաշխիքի կամ (iv) Մարտկոցի և/կամ BlackBerry-ի Ձեռքի սարքի հետ տրամադրվող անվտանգության մասին տեղեկատվության խախտմամբ (Երաշխիքային Ժամկետ): Այս Սահմանափակ Երաշխիքը հնարավոր չէ փոխանցել: Երաշխիքային Ժամկետի ընթացքում, եթե Մարտկոցը անսարք է պատրաստման և նյութերի առումով, ապա Մարտկոցը կփոխարինվի չգանձելով Ձեզանից գումար մասերի կամ աշխատանքի դիմաց: Եթե Մարտկոցը փոխարինվում է Երաշխիքային Ժամկետում, ապա Երաշխիքային Ժամկետը կսպառվի փոխարինումից հետո 91-րդ օրը լրանալուն պես, կամ իրական գնումից մեկ (1) տարին լրանալուց հետո: Ելնելով RIM-ի և վերավաճառողի կամ դիստրիբյուտորի, որի միջոցով Դուք գնել եք Մարտկոցը և/կամ BlackBerry Լուծումը (RIM Լուծման Մատակարար) միջև կնքված Համաձայնագրից Երաշխիքային Ժամկետի համար նախատեսված այս Սահմանափակ Երաշխիքը պետք է տրամադրվի ինչպես RIM-ի, այնպես էլ RIM Լուծման Մատակարարի կողմից: Այս Սահմանափակ Երաշխիքը չի կիրառվում Մարտկոցի սովորական մաշվածության, թուլացման նկատմամբ, կամ եթե Մարտկոցը կամ որևէ բաղադրամաս բացված կամ վերանորոգված է որևէ մեկի կողմից, ով լիազորված չէ RIM-ի կողմից, ինչպես նաև չի ընդգրկում որևէ Մարտկոցի փոխարինումը վնասվածքի պատճառով, որն առաջացել է՝ սխալ օգտագործման, խոնավության կամ հեղուկների, տաքությանը ենթարկվելու կամ մոտ լինելու, վթարի, չարաշահման, անփութության, սխալ կիրառման կամ ոչ RIM-ի կողմից կատարած վերանորոգման անսարքությունների կամ ձևավորումների հետևանքով: Այս Սահմանափակ Երաշխիքը չի հատուցում Մարտկոցի մակերեսի ֆիզիկական վնասվածքը: Այս Սահմանափակ Երաշխիքը չի կիրառվում Մարտկոցից բացի որևէ այլ սարքի նկատմամբ: Այս Սահմանափակ Երաշխիքը նաև չի կիրառվում, եթե թերի աշխատանքը հանդիսանում է Մարտկոցի հետ համատեղ RIM-ի կողմից չտրամադրված կամ հստակ չհաստատված պիտույքների, ապրանքների, ծառայությունների կամ օժանդակ, կամ արտաքին սարքավորումների կիրառման արդյունք, ուր նշված է RIM-ի կողմից, որ նման թերի աշխատանքը տեղի է ունենում ոչ Մարտկոցի մեղքով: Ի լրումն, Սահմանափակ Երաշխիքը կարող է լինել անվավեր, իսկ եթե նույնիսկ ոչ անվավեր, ապա այն կարող է չկիրառվել, եթե թերի աշխատանքը պայմանավորված է օգտվողի կողմից Մարտկոցի կամ BlackBerry-ի Ձեռքի սարքը, յուրաքանչյուր BlackBerry-ի պիտույքներ՝ ներառյալ արտաքին մարտկոցները և SIM քարտերը, BlackBerry-ի Սեղանի Ծրագրաշարը, և համակցված անլար տվյալների ծառայությունը և փաստաթղթերը (BlackBerry Լուծում) ընդգրկող BlackBerry Լուծման որևէ բաղադրամասի հետ տրամադրվող անվտանգության տեղեկատվությանը չհետևելու հանգամանքով: **Խնդրում ենք, դիմել Ձեր ծառայություն մատուցողին, ցանցային օպերատորին կամ մատակարարին տեղեկանալու կամար, թե ինչպես ստանալ տեխնիկական աջակցություն Ձեր Մարտկոցի համար:**

ՄԱՐՏԿՈՑԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ՅՈՒՅՑ Է ՏՐՎԱԾ ԱՅՍՏԵՂ, ՁԵՁ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ԲԱՅԱՌԻԿ ՄԻՋՈՑ Է՝ ԿԱՊՎԱԾ ԱՆՄԱՐՔ ՄԱՐՏԿՈՑԻ ՇԵՏ: ԱՅՍ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԸ ԾԱՌԱՅՈՒՄ Է ԲԱՅԱՀԱՅՏ ԿԵՐՊՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԿԱՍ ԵՆԹԱԴԻՎՈՂ ԲՈՒՆՈՐ ԱՅԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ, ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ, ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ՆԵՐԱՌՅԱԼ, ՍԱԿԱՅՆ ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼՈՎ ՈՐԵՎԷ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ, ԵՐԱՇԽԻՔՈՎ, ՀԱՍՏԱՏՈՒՄՈՎ, ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՍ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՈՎ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՈՐԱԿՈՎ, ԲԱՎԱՐԱՐ ՈՐԱԿՈՎ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍՊԵՑԻՖԻԿ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՄԲ ԿԱՍ ՆՊԱՏԱԿՈՎ, ԱՆՎԱՆՄԱՄԲ, ԱՐՏՈՆԱԳՐԻՉԽՄԵՍՄԱՄԲ, ԿԱՍ ԱՅԼ ԿԵՐՊ ԱՌԱՋԱՅՈՂ ՕՐԵՆՔՈՎ,

ԿԱՄ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԿԱՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՐԳՈՎ, ԿԱՄ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՈՎ: ՈՉ RIM-Ը, ՈՉ ԷԼ RIM ԼՈՒԾՄԱՆ ՈՐԵՎԷ ՄՍՏԱԿԱՐԱՐԸ ՊՍՏԱԿԱՐԱՐՈՒ ԶԻ ԶԵՁ ԵՎ ԴՈՒՔ ՍՈՒՅՆՈՎ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՔ ՈՐԵՎԷ ԱՆՈՒՂՂԱԿԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀԱՏՈՒԿ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ, ՊՍՏԱՀԱԿԱՆ, ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ԿԱՄ ԿՈՂՄՆԱԿԻ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՁԻՑ (ՆԵՐԱՌՅԱԼ, ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՄԱՆ, ԿՈՐՑՐԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԻ ԿԱՄ ՇԱՀՈՒՅԹԻ ԿՈՐՍՏԻ, ԿՈՐՑՐԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ԱԿՆԿԱԼՎԵԼԻՔ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՁԱԽՈՂՄԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ)՝ ՄԱՐՏԿՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ, ՆՈՒՅՆԻՄԿ ԵԹԵ RIM-Ը ԿԱՄ RIM ԼՈՒԾՄԱՆ ՄՍՏԱԿԱՐԱՐԸ ՏԵՂՅԱԿ ԵՆ ՆՄԱՆԱՏԻՊ ՎՆԱՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ԱՅՍ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄԸ ԿԻՐԱՌՈՒՄ Է ԵՆԹԱԴՐՈՒՄ և ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԱՆԿԱԽ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԱՐԴՅՈՒՔ ՆՄԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ ՊԱՀԱՆՁՎՈՒՄ Է ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼ, ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԿԱՄ ԳՈՐԾԻ ԴՆԵԼ, ԿԱՄ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀԱՅՑԻ (ՆԵՐԱՌՅԱԼ ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ) ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ, ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՕՐԵՆՔԻ, ԿԱՄ ՀԱՅՑԻ ՁԱԻ ԴԵՊՔՈՒՄ: ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ RIM-Ի ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՐԸ ՀԱՅՑՈՒՄ Է ՁԵՐ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ՁԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ, ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԳՆՎԱԾ ՄԱՐՏԿՈՑԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆԸ ԿԱՄ ՄԱՐՏԿՈՑԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՐԺԵՔԸ, ԴՐԱՆՑԻՑ ՈՐ ՄԵԿՆ ԷԼ ՈՐ ԼԻՆԻ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ: ԿԱՄԿԱԾՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՉ ՄԻ ԲԱՆ ԱՅՍ ՓԱՏՏԱԹՂԹՈՒՄ ՉՊԵՏՔ Է ԲԱՑԱՌԻ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄ RIM-Ի ԿԱՄ RIM ԼՈՒԾՄԱՆ ՈՐԵՎԷ ՄՍՏԱԿԱՐԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀՎԱՆ ԿԱՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՎՆԱՄՎԱԾՔ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՈՐՈՆՔ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ RIM-Ի, ԻՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՄ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ, ԿԱՄ RIM ԼՈՒԾՄԱՆ ՆՄԱՆԱՏԻՊ ՄՍՏԱԿԱՐԱՐԻ ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ:

ԱՅՍ ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԵՐԱՇԽԻՔԸ ՏԱԼԻՄ Է ՁԵՁ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, և ԴՈՒՔ ՆԱԵՎ ԿԱՐՈՂ ԵՔ ՈՒՆԵՆԱԼ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԵՆ ԵՐԿՐԻՑ ԵՐԿԻՐ: ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՉԹՈՒՅԼԱՏՐԵՆ ՊՍՏԱՀԱԿԱՆ ԿԱՄ ԿՈՂՄՆԱԿԻ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԲԱՑԱՌՈՒՄ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄ, ՀՆԱՐԱՎՈՐ Է ՉԹՈՒՅԼԱՏՐԵՆ ԿԻՐԱՌՎԵԼԻ ԵՐԱՇԽԻՔԻ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ, ԿԱՄ ՉԹՈՒՅԼԱՏՐԵՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ՈՐՈՆՔ ԹՈՒՅԼ ԵՆ ՏԱԼԻՄ ԵՐԱՇԽԻՔԸ ՃԱՆԱՉԵԼ ԱՆՎԱԿԵՐ: ԱՅՍՊԻՍՈՎ, ՎԵՐՈՇԻՇՅԱԼ ՈՐՈՇ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՉԿԻՐԱՌՎԵՆ ՁԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ: ՁԵՐ՝ ՈՐՊԵՍ ՍՊԱՌՈՂԻ, ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՉԵՆ ԱԶԳՎՈՒՄ ԱՅՆ ԴԵՔՈՒՄ, ԵՐԲ ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԻՐԱՎՈՒՆՔ:

RIM-ի կողմից պարտավորությունների չկատարման կապակցությամբ պահանջներ ներկայացնելուց հրաժարականը չի դիտարկվի որպես շարունակական հրաժարական նման կամ որևէ այլ պարտավորությունների չկատարման կապակցությամբ պահանջներ ներկայացնելուց:

Այս Սահմանափակ Երաշխիքը կառավարվում և մեկնաբանվում է համաձայն Անգլիայի և Ուելսի օրենքների՝ բացառությամբ օրենքի որևէ մասի, որ զբաղվում է օրենքի կոնֆլիկտների կառավարմամբ: Այս Սահմանափակ Երաշխիքի կողմերը (միասին՝ Կողմեր՝ և առանձին՝ Կողմ) համաձայնում են, որ Ապրանքների Միջազգային Վաճառքի Պայմանագրերի վերաբերյալ Միացյալ Ազգերի Կոնվենցիայի կիրառումը այս Սահմանափակ Երաշխիքի նկատմամբ ամբողջությամբ բացառվում է: Այս Սահմանափակ Երաշխիքից բխող կամ դրա հետ կապված բոլոր անհամաձայնությունները և վեճերը պետք է վերջնականապես լուծվեն միջնորդ դատարանի միջոցով: Միջնորդ դատավորի որոշումը լինելու է վերջնական և պարտադիր Կողմերի համար (բացառությամբ եթե տեղի է ունեցել բացահայտ սխալ): Միջնորդ դատավորի որոշումը պետք է

կատարվի գրավոր և լինի հիմնավորված: Միջնորդ դատավորի որոշումը պետք է դրույթներ սահմանի Կողմերի կողմից միջնորդ դատարանի ծախսումների վճարման վերաբերյալ այնպիսի համաչափերով, որոնց նպատակահարմարությունը կորոշի միջնորդ դատավորը: Եթե Ձեր իրավասության ներքո գտնվող օբեկտներն այլ ձևով արգելված չէ, ապա միջնորդ դատը պետք է՝ (i) անցկացվի Լոնդոնում, Անգլիայում; (ii) վարվի Անգլիայի օբեկտի շրջանակներում; (iii) վարվի անգլերեն լեզվով; (iv) լուծվի Միջազգային Առևտրային Պալատի (Կանոնների) Միջնորդ Դատարանի Կանոնների շրջանակներում; և (v) լավի վերոհիշյալ Կանոնների համաձայն նշանակված միջնորդ դատավորի կողմից, և փոխադարձ համաձայնեցվի Կողմերի կողմից միջնորդ դատավորի նշանակումից 30 օրվա ընթացքում, այդ համաձայնության ձևախոսման դեպքում միջնորդ դատավորը պետք է առաջադրվի գրասենյակի Նախագահի կողմից Բրիտանական Համակարգչային Հասարակության (կամ Նախագահի կողմից իր փոխարեն գործելու նպատակով համապատասխան նշանակված անձի կողմից) կողմից միջնորդ դատի հայտի ներկայացման պահին յուրաքանչյուր Կողմի դիմումի ներկայացմամբ: Եթե վերոհիշյալ դատավճռի դրույթները արգելված են Ձեր իրավասության ներքո գործող օբեկտով, ապա միջնորդ դատը պետք է՝ (i) անցկացվի Երևանում, Հայաստանի Հանրապետություն; (ii) լուծվի Հայաստանի Հանրապետության Առևտրի և Արդյունաբերության Պալատի Միջնորդ Դատարանի Կանոնների (Կանոններ) համաձայն; և (iii) լավի Կանոնների համաձայն նշանակված միջնորդ դատավորի կողմից, և փոխադարձ համաձայնեցվի Կողմերի կողմից միջնորդ դատավորի նշանակումից 30 օրվա ընթացքում, որի ձևախոսման դեպքում միջնորդ դատավորը պետք է նշանակվի երրորդ չեզոք կողմի կողմից: Առանց RIM-ի նախնական գրավոր համաձայնության Կողմերի միջև ոչ մի վիճաբանություն չի կարող միավորվել, կամ ձեզանից բացի որևէ այլ անձ չի կարող ներգրավվել որպես համահայցվոր:

Եթե այս Սահմանափակ Երաշխիքի դրույթը անվավեր է կամ իրավական ուժ չունեցող, ապա նման անվավերականությունը կամ իրավական ուժի բացակայությունը չպետք է անվավեր դարձնի կամ զրկի իրավական ուժից ամբողջ Սահմանափակ Երաշխիքը, այլ ավելի շուտ (եթե դրա արդյունքում տեղի չունենա դիտարկման ձևախոսում) Սահմանափակ Երաշխիքը պետք է մեկնաբանվի, որպես առանձին անվավեր կամ իրավական ուժ չունեցող դրույթ կամ դրույթներ չպարունակող, և յուրաքանչյուր Կողմի իրավունքներն ու պարտավորությունները պետք է մեկնաբանվեն և կատարվեն համապատասխանաբար:

Եթե այս Անսահմանափակ Երաշխիքը անգլերեն լեզվից բացի որևէ այլ լեզվով թարգմանվի, ապա անգլերեն լեզվով տարբերակը կհամարվի գերիշխող անգլերեն և թարգմանված լեզվի տարբերակների միջև իմաստային անհամապատասխանության կամ հակասության առկայության դեպքում:

Եթե առկա է որևէ անհամապատասխանություն այս Անսահմանափակ Երաշխիքի և Մարտկոցի փաթեթավորման մեջ ընդգրկված որևէ երաշխիքի միջև, ապա նման անհամապատասխանության դեպքում գործում են այս Անսահմանափակ Երաշխիքի դրույթները:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ Այս Մարտկոցը նախատեսված է ՄԻԱՅՆ համապատասխան BlackBerry-ի Ձեռքի սարքի հետ համատեղ օգտագործման համար: Խնդրում ենք դիտել Ձեր Տեղադրման և Ներածության Ուղեցույցը կամ Ներածության Ուղեցույցը, որոշելու համար, արդյոք այս Մարտկոցը համատեղելի է Ձեր BlackBerry-ի Ձեռքի սարքի հետ: Յուրաքանչյուր այլ նպատակով օգտագործում անվավեր կդարձնի այս Մարտկոցի Սահմանափակ Երաշխիքը, և RIM-ը որևէ կերպ պարտավորություն չի կրի Ձեր կամ որևէ երրորդ կողմի նկատմամբ Ձեզ կամ որևէ երրորդ կողմին որևէ վնաս հասցնելու համար այս Մարտկոցը BlackBerry-ի Ձեռքի սարքից բացի որևէ այլ սարքի կամ պիտույթի հետ համատեղ օգտագործելու արդյունքում:

© 2009 Research In Motion ՄՊԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: BlackBerry®, RIM®, Research In Motion®, SureType® և առնչվող ապրանքանիշերը, անվանումները և պատկերանշանները հանդիսանում են Research In Motion ՄՊԸ-ի սեփականություն և գրանցված են և/կամ օգտագործվում են ԱՄՆ-ում և աշխարհի մնացած երկրներում: